Կարգապահական գործ թիվ ԿԳ-21010

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի հուլիսի 28-ի թիվ 283-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/168-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Կարեն Սարդարյանի, Կարեն Մեժլումյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Լիլիթ Ղազանչյանի և Արսեն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Սարգսյանին (արտոնագիր՝ 2004) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Լաուրա Եգանյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

28.05.2020թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքվել իր և փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** միջև, որով Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը դատարանում:

Դիմողը նշել է, որ փաստաբանին վճարել է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար ծառայության համար, ինչպես նաև 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ գումար խորհրդատվության համար: Դիմողը նշել է, որ երկու անգամ փաստաբանի հետ հանդիպելուց հետո, վերջինս ասել է, որ չի կարող օգնել այդ գործով: Դիմողը Փաստաբանից պահանջել է վերադարձնել նախապես վճարված գումարը, սակայն վերջինս հրաժարվել է:

Դիմողը հայտնել է, որ 12.01.2021թ. վերջինս և իր դուստրը կրկին հանդիպել են Փաստաբանին և պահանջել վերադարձնել իրենց կողմից վճարված գումարը, ինչին ի պատասխան Փաստաբանը պարտավորվել է գումարը փոխանցել վերջիններիս

բանկային հաշվեհամարին, ինչից հետո վիճաբանություն է սկսվել նրանց միջև: Վիճաբանության ժամանակ Փաստաբանը վիրավորական արտահայտություններ է կատարել Դիմողի և նրա դստեր հասցեին, այնուհետև, տեսնելով, որ Դիմողի դուստրը նկարահանում է իրեն, խփել է վերջինիս և հեռախոսը հեռու շպրտելով՝ կոտրել այն: Դիմողի պնդմամբ տեղի ունեցածից հետո Փաստաբանը հարվածել է իր գլխին և փորձել փախչել, ինչը նկատելով՝ երկու ոստիկաններ վերջինիս տարել են ոստիկանություն:

Դիմողը խնդրել է փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և քննարկել վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 16.04.2021թ. թիվ 70-Ա/ԿԳ-21010 որոշման հիման վրա փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

16.04.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գայանե Ալիխանյանին **(այսուհետ նաև Նախապատրաստող):**

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է և ըստ էության հաստատել նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ իր հետ վիճաբանության արդյունքում ոստիկաններ են մոտեցել և Տիգրան Սարգսյանին ուղեկցել ոստիկանության բաժանմունք:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Տիգրան Սարգսյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Լաուրա Եգանյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանի բացատրությունը Պալատում մուտքագրվել է 25.03.2021 թվականին: Բացատրությամբ փաստաբանն ըստ էության հայտնել է, որ վերջինս փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Դիմողի հետ, որից հետո բարեխիղճ կերպով կատարել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ծառայություններ է մատուցել արտադատական փուլում, այնուհետև ներկայացել է Դիմողի

գործով մեկ դատական նիստի, որը հետաձգվել է դատարանի նախաձեռնությամբ: Փաստաբանի պնդմամբ հաջորդ դատական նիստը հետաձգելու միջնորդություն ինքն է ներկայացրել Դիմողի պահանջով, սակայն դատարանը մերժել է իր դիմումը, և դատական նիստը կայացել է: Փաստաբանը հայտնել է, որ վերջինս Դիմողի խնդրանքով նաև վճռաբեկ բողոք է կազմել, ինչի համար փաստացի չի վճարվել:

Փաստաբանը նշել է, որ Դիմողը փորձել է ամեն կերպ դատական գործի ելքի վերաբերյալ երաշխիք կորզել իրենից, սակայն, այդպես էլ երաշխիք չստանալով, վերջինս և իր դուստրը վիճաբանություն են սկսել իր հետ և պահանջել ետ վերադարձնել իրենց կողմից վճարված հոնորարը:

Փաստաբանը սկզբում հրաժարվել է գումար վերադարձնել, պարզաբանելով, որ դա հանդիսանում է իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց վարձատրություն, սակայն այնուհետև, խղճալով Դիմողին, խոստացել է փոխանցել գումարը վերջինիս բանկային հաշվեհամարին:

Փաստաբանը նաև նշել է, որ ինքն է ահազանգել ոստիկանություն և ոստիկանության կենտրոնի բաժանմունքում շորթում կատարելու փաստով հաղորդում ներկայացրել Դիմողի դեմ:

Փաստաբանը չի ներկայացել Պալատի խորհրդի նիստին:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 16.06.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Փաստաբանն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 25.06.2021թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 28.07.2021թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին*

ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- 28.05.2020թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքվել Դիմողի և փաստաբան Տիգրան Սարգսյանի միջև: *Սույն փաստը հաստատվում է Դիմումին կից ներկայացված 28.05.2020թ. պայմանագրի պատճենով:*
- Դիմողը Փաստաբանին վճարել է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար: *Սույն փաստը հաստատվում է Դիմումին կից ներկայացված բանկային վճարման անդորրագրի պատճենով:*
- 12.01.2021թ-ին Դիմողը և իր դուստրը հանդիպել են Փաստաբանին, վերջիններիս միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում պահանջել են վերադարձնել իրենց կողմից վճարված գումարը, ինչին ի պատասխան Փաստաբանը պարտավորվել է գումարը փոխանցել Դիմողի բանկային հաշվեհամարին: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 12.02.2021թ. որոշմամբ:*
- Դիմողը գնացել է Փաստաբանի հետևից, հասել են ոստիկանության Կենտրոնական բաժնի մոտ, որտեղ դիմողի դուստրը՝ Լ. Խաչատրյանը, իր բջջային հեռախոսով սկսել է նկարել Փաստաբանին, այդ ժամանակ նա ձեռքով սկսել է հարվածել Լ. Խաչատրյանի ձեռքին, ինչի հետևանքով նրան պատկանող բջջային հեռախոսը ընկել է ձեռքից և կոտրվել, այդ նույն ընթացքում Փաստաբանը սկսել է քաշքշել իրեն, որի ընթացքում բռունցքով մեկ անգամ հարվածել է նաև վերջինիս գլխին: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 12.02.2021թ. որոշմամբ:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Սարգսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 28.11.2015թ., և 2017-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 3 (երեք) անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից 06.03.2018թ. հարուցված թիվ ԿԳ/32 և 11.08.2020թ. հարուցված թիվ ԿԳ/74 կարգապահական վարույթները կարճվել են, իսկ 06.04.2021թ. հարուցված թիվ ԿԳ/157 որոշման համաձայն վերջինիս նկատմամբ կիրառվել է խիստ նկատողություն կարգապահական տույժը, որը մարված չէ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ:

7.1 Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման մասով

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառներում այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև* ***Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի[1] կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները****:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ*

մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը[2]*:*

Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ:

Տվյալ պարագայում, թեև Դիմողը տևական ժամանակ փաստաբանի կամքին հակառակ հետևել և տեսանկարահանել է նրան, այդուհանդերձ փաստաբանը Դիմողի և վերջինիս դստեր հետ վիճաբանության արդյունքում հրել է Դիմողի դստերը, ցանկացել է բռնություն գործադրելով վերցնել վերջինիս հեռախոսը և դուրս է եկել վարվեցողության կոռեկտության շրջանակներից:

Վերոգրյալից հետևում է, որ Փաստաբանն իր վարքագծի արդյունքում կասկածի տակ է դրել փաստաբանի մասնագիտական և հանրային հեղինակությունը: Փաստաբաննի նման վարքագիծը համարժեք չէ Դիմողի նախորդած վարքագծին:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի կողմից խախտվել են Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջները:

******

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի իրավադրույթներին: Այսինքն՝ Փաստաբանի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի շրջանակներում Փաստաբանի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի որևէ դրույթի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-

[2] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

րդ կետի խախտմանը:

8. Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է *«խիստ նկատողություն»* կարգապահական տույժը:

Անդրադառնալով կարգապահական խախտման դրսևորման մեղքի ձևին՝ Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը դրսևորել է համապատասխան վարքագիծը դիտավորությամբ, քանի որ գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 2004) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

28 հուլիս 2021թ.
թիվ ԿԳ/168-Ա
ք. Երևան